ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Գ. Միրիջանյանի մոտ 2018 թվականի սեպտեմբերի 17-ին կայացած խորհրդակցության

Մասնակցությամբ՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալներ — *Գ. Գաբրիելյանի*, *Կ.Գրիգորյանի*, *Ա.Ղուկասյանի*

ՀՀ Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար — *Վ.Վարդազարյանի*

ՀՀ Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ — *Ա.Հովհաննիսյանի*

ՀՀ Արմավիրի մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների

ՀՀ Արմավիրի մարզպետի օգնականների և խորհրդականների

Օրակարգում

1. *ՀՀ Արմավիրի մարզում առկա հրատապ խնդիրների քննարկում:*

/ՀՀ Արմավիրի մարզպետ – Գ.Միրիջանյան/

Քննարկվեցին՝

Հարց 1. ՀՀ Արմավիրի մարզի հողի հարկի և գույքահարկի գծով խոշոր պարտավորություններ ունեցող ֆիզիկական անձանց հարկային պարտավորությունների կատարման վերանայման վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վ. Մկրտչյանին՝

վերանայել ՀՀ Արմավիրի մարզի հողի հարկի և գույքահարկի գծով խոշոր պարտավորություններ ունեցող ֆիզիկական անձանց հարկային պարտավորությունների կատարումը և ըստ անհրաժեշտության ձեռնարկել համապատասխան միջոցներ դրանք դատական կարգով գանձելուն և ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետին:

/Ժամկետ՝ 24.09.2018թ./:

Հարց 2. Արմավիրի մարզի բուժ.հաստատություններում իրականացվող մոնիտորինգի աշխատանքները սեղմ ժամկետում իրականացնելու և ավարտելու վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ Ա.Ղուկասյանին, ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ Կ.Գրիգորյանին և ՀՀ Արմավիրի մարզպետի օգնական Վ.Վանցյանին՝
սեղմ ժամկետներում իրականացնել և ավարտել ՀՀ Արմավիրի մարզի բուժ.հաստատություններում իրականացվող մոնիտորինգի աշխատանքները և արդյունքները ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետի քննարկմանը::
/Ժամկետ՝ 24.09.2018թ./:

Հարց 3. ՀՀ Արմավիրի մարզպետարանի ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության ուսումնասիրման և վերահսկման աշխատանքներն իրականացնելու վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ Ա.Ղուկասյանին,
ՀՀ Մարզպետի տեղակալ Կ.Գրիգորյանին,
ՀՀ Արմավիրի մարզպետի օգնական Ա.Բիչախչյանին՝
ՀՀ Արմավիրի մարզպետարանի ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործունեությունը և դրանց հետ առնչվող դիմում-բողոքների ուսումնասիրության հետ կապված աշխատանքները առանձին-առանձին ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետի քննարկմանը՝ ըստ անհրաժեշտության դրանց համապատասխան իրավական ընթացք տալու համար:
/Ժամկետ՝ 24.09.2018 /:

Հարց 4. ՀՀ Արմավիրի մարզպետարանում ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Վ.Վարդազարյանին,
ՀՀ Արմավիրի մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժնի պետ Ն.Մարտիրոսյանին՝
Ստեղծել համապատասխան հանձնաժողով ՀՀ Արմավիրի մարզպետարանում իրականացվող ծառայողական քննության աշխատանքներն իրականացնելու համար և արդյունքները զեկուցել ՀՀ Արմավիրի մարզպետին:
/Ժամկետ՝ 24.09.2018թ./

Հարց 5.<<Սերմերի գործակալություն>> ՊՈԱԿ-ի գործով կայացած վճռի հիմքերն ուսումնասիրելու վերաբերյալ;

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետի պաշտոնակատար Լ.Հարությունյանին՝
<<Սերմերի գործակալություն>> ՊՈԱԿ-ի գործով կայացած վճռի հիմքերն ուսումնասիրելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ և ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետի հաստատմանը:

Հարց 6. ՀՀ Արմավիրի մարզի համայնքների վարչական տարածքներում առկա հողերի կարգերի ճշգրտման և պաշտոնական շրջանառությունից թաքցված մշակվող հողատարածքների /այգիների, ցանքատարածություններ և այլն/ հայտնաբերման և ուսումնասիրման աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ Գ.Գաբրիելյանին,
ՀՀ Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Վ.Վարդազարյանին,
ՀՀ Արմավիրի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային տեսչության պետ Ա. Դարբինյանին՝
ՀՀ Արմավիրի մարզի համայնքների վարչական տարածքներում առկա հողերի կարգերի ճշգրտման և պաշտոնական շրջանառությունից թաքցված մշակվող հողատարածքների/ այգիների և ցանքատարածություններ և այլն/ հայտնաբերման և ուսումնասիրման աշխատանքների վերաբերյալ կազմել ժամանակույց և ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետին:
/ժամկետ՝ 24.09.2018թ./:

Հարց 7. ՀՀ Արմավիրի մարզում Սևանա լճից լրացուցիչ ջրառի իրականացման ծավալների և դրանց արդյունավետ օգտագործման գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ա.Այվազյանին՝

ՀՀ Արմավիրի մարզում Սևանա լճից լրացուցիչ ջրառի իրականացման ծավալների և դրանց արդյունավետ օգտագործման գործընթացի նկատմամբ վերահսկողության աշխատանքներն իրականացնելու համար կազմել ժամանակացույց և ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետին:
/ժամկետ 24.09.2018թ/:

Հարց 8. ՀՀ Արմավիրի մարզի համայնքներում իրականացվող աղբահանության, դրանց իրավական գործընթացի և աղբահանության համար գանձվող վարձավճարների վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի պաշտոնակատար Ա. Հովհաննիսյանին,
ֆինանսական և սոցիալ-տնտեսական տնտեսական զարգացման վարչության պետ Վ.Մկրտչյանին՝
ուսումնասիրել ՀՀ Արմավիրի մարզի համայնքներում իրականացվող աղբահանության աշխատանքները, դրանց իրավական և վարձավճարների գանձման վերաբերյալ գործընթացը և արդյունքները զեկուցել ՀՀ Արմավիրի մարզպետին:

Հարց 9. ՀՀ Արմավիրի մարզպետարանի, մարզպետարանի ենթակայությամբ գործող ՊՈԱԿ-ների, առողջապահական հաստատությունների թափուր պաշտոնների մրցույթների վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Վ.Վարդազարյանին,
կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ս.Բուդաղյանին և անձնակազմի կառավարման բաժնի պետ Ն.Մարտիրոսյանին՝
հայտարարել ՀՀ Արմավիրի մարզպետարանի, մարզպետարանի ենթակայությամբ գործող ՊՈԱԿ-ների, առողջապահական հաստատությունների թափուր պաշտոնների վերաբերյալ բոլոր մրցույթները: /ժամկետ 24.09.2018թ/:

Հարց 10. Սեպտեմբերի 21-ին Անկախության տոնին նվիրված միջոցառումներին ՀՀ Արմավիրի մարզը ներկայացնելու վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Վ.Վարդազարյանին,
տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Ա.Ղուկասյանին,
կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ Ա.Թովմասյանին.
ՀՀ Արմավիրի մարզպետի խորհրդական Ն.Պետրոսյանին՝
իրականացնել ՀՀ Արմավիրի մարզում սեպտեմբերի 21-ին անկախության տոնին նվիրված միջոցառումների կազմակերպչական աշխատանքները և զեկուցել ՀՀ Արմավիրի մարզպետին:

Հարց 11. <<Շանթ-2018>> զորավարժություններին ակտիվ մասնակցություն ցուցաբերած անձանց խրախուսելու վերաբերյալ:

Հանձնարարական

ՀՀ Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Վ.Վարդազարյանին
տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիրի մարմինների հարցերով վարչության պետ Ա.Ղուկասյանին
զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Ա.Հակոբյանին
պատրաստել ՀՀ Արմավիրի մարզպետի գրություն՝ ուղղված ՀՀ Պաշտպանության նախարարին <<Շանթ-2018>> զորավարժություններին առավել ակտիվ մասնակցություն ունեցած անձանց խրախուսելու՝ շնորհակալագրերով պարգևատրելու և զինվորական կոչումները բարձրացնելու համար:
/ժամկետ՝ 24.09.2018թ./:

Հարց 12. Սեպտեմբերի 21-ին Անկախության տոնին նվիրված միջոցառումներին մշակույթի վաստակավոր գործիչներին մարզպետի շնորհակալագրով պարգևատրելու մասին:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Վ.Վարդազարյանին
կրթության մշակույթի և սպորտի վարչության մշակութի և սպորտի բաժնի պետ Ա.Թովմասյանին
պատրաստել ՀՀ Արմավիրի մարզպետի շնորհակալագրեր մշակույթի վաստակավոր գործիչներին սեպտեմբերի 21-ին Անկախության տոնին նվիրված միջոցառմանը խրախուսելու համար և ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետի հաստատմանը:
/ժամկետ 24.09.2018թ/:

Հարց 13. ՀՀ Արմավիրի մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ներկայացվող տեղեկատվության վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Վ. Վարդազարյանին՝
պատրաստել համապատասխան տեղեկատվություն՝ ՀՀ Արմավիրի մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից մանրամասն և ամբողջական՝ ընդգրկելով յուրաքանչյուր ոլորտին և գործունեությանը առնչվող ենթակառուցվածքների, դրանց ծավալների,

քանակության և առկա իրավիճակի մասին և ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետին:

/ժամկետ24.09.2018թ/:

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ

24.09.2018

X

VERIFIED OCSP 24.09.2018 10:30:46 GMT+4

Подписано: MIRIJANYAN GAGIK 2608810403

ՄԱՐԶՊԵՏ՝

Գ. ՄԻՐԻՋԱՆՅԱՆ

Արձ.՝
Մ.Առուշանյան